

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

կարևոր նշանակություն տալով հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության զարգացմանն ու երկու պետությունների քաղաքացիների իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանության ապահովմանը,

ընդգծելով, որ հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության հիմքում ընկած են Կողմերի իրավահավասարության, փոխըմբռնման և փոխշահավետության սկզբունքները,

ելնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի մարմինների միջև համագործակցության ամրապնդման և զարգացման ցանկությունից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը իրենց իրավասության շրջանակներում ապահովում են երկու պետությունների քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և գույքի պաշտպանությունը:

Կողմերը պարտավորվում են ապահովել ներքին գործերի մարմինների կողմից մյուս Կողմի պետության քաղաքացիների և իրավաբանական անձանց բողոքների և դիմումների անարգել ընդունումը և քննումը այն հարցերով, որոնք վերաբերում են այդ մարմինների իրավասությանը:

Հոդված 2

Կողմերը իրենց պետություններում գործող օրենսդրության հիման վրա, իրենց իրավասության սահմաններում իրականացնում են համագործակցություն հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղություններով՝ նախատեսված 1992 թվականի ապրիլի 24-ի «Հանցավորության դեմ պայքարի բնագավառում Անկախ պետությունների ներքին գործերի նախարարությունների համագործակցության մասին» Համաձայնագրի առաջին հոդվածով,

ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ուղղություններով:

Հոդված 3

Կողմերը, իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, համագործակցությունն իրականացնում են հետևյալ ձևերով՝

ա) նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների և դրանց առնչվող անձանց վերաբերյալ տեղեկության, միջազգային բնույթ ունեցող արտակարգ դեպքերի և ծանր հանցագործությունների վերաբերյալ տեղեկության, արխիվային տեղեկության փոխանակում,

բ) հետախուզական միջոցառումների և դատավարական գործողությունների անցկացում,

գ) աշխատանքային փորձի, ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող օրենսդրական և նորմատիվ ակտերի փոխանակում,

դ) քրեագիտական, հրշեջ և հատուկ տեխնիկայի, գույքային ունեցվածքի, արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի, պահեստամասերի, ծախսի նյութերի և ընդհանուր քաղաքացիական նշանակության այլ գույքի փոխշահավետ մատակարարում,

ե) երկու պետությունների տարածքներում գտնվող մատակարարող ձեռնարկությունների հետ անմիջական կապերի հաստատման գործում փոխադարձ օգնություն,

զ) փոխադարձ հաշվարկի հիման վրա կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման հարցերում օգնության ցուցաբերում,

է) փոխադրման և ուղեկցման իրականացում,

ը) ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող գիտատեխնիկական գրականության և տեղեկության փոխանակում, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող արդիական հիմնախնդիրների վերաբերյալ գիտական հետազոտությունների, մշակումների և ծրագրերի համատեղ անցկացում,

թ) ծածկագրային կապի կազմակերպում,

ժ) մշակութային և մարզական կապերի զարգացում, աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների սանատորաառողջարանային բուժման գործում աջակցության ցուցաբերում:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի կատարման նպատակով Կողմերի ներքին գործերի մարմինների կառուցվածքային ստորաբաժանումները իրենց իրավասության սահմաններում կարող են հաստատել անմիջական

կապեր և ստորագրել լրացուցիչ պայմանագրային փաստաթղթեր իրենց գործունեության առանձին ուղղություններով համագործակցելու մասին:

Հոդված 5

Կողմերը, ազգային օրենսդրությանը համապատասխան, պարտավորվում են միմյանց օգնություն ցույց տալ հետևյալ ճանապարհով՝

- քրեական գործերով, օպերատիվ հաշվառման գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերով հարցումներ կատարելով,

- վկաներին կանչելով և որպես վկա հարցաքննելու համար կալանքի տակ պահվող անձանց տեղ հասցնելով,

- հանձնման ենթակա անձանց կալանքի տակ վերցնելով,

- հետաքննության, քննչական և դատական մարմինների թաքնված անձանց հետախուզելով, ձերբակալելով, անհրաժեշտության դեպքում նրանց կալանքի տակ վերցնելով,

- հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ հանցագործության հետքեր պարունակող, հանցագործության գործիք համարվող առարկաները ուղարկելով և հանձնելով:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված հարցումները պետք է համապատասխան կերպով ձևակերպված լինեն և ունենան հետևյալ ռեկվիզիտները՝

ա) հարցումը ուղարկող կառուցվածքային ստորաբաժանման և այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, ում դրանք ուղղված են,

բ) հարցմանը վերաբերող գործի կամ նյութի անվանումը,

գ) վկաների, տուժողների, կասկածյալների, մեղադրյալների, հետախուզվողների, ամբաստանյալների և դատապարտյալների անունները, ազգանունները, նրանց քաղաքացիությունը, զբաղմունքը և մշտական բնակության կամ գտնվելու վայրը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց օրինական ներկայացուցիչների ազգանունները և հասցեները,

դ) հարցման բովանդակությունը, ինչպես նաև դրանց էությանը և իրավախախտման հանցակազմի նկարագրությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ:

Հարցմանը կցվում են նաև դրա կատարման համար անհրաժեշտ, պատշաճ կերպով ձևակերպված փաստաթղթեր:

Հարցումը պետք է հաստատված լինի ներքին գործերի մարմնի զինանշանը պատկերող կնիքով և ղեկավարի ստորագրությամբ:

Անհետաձգելի դեպքերում կարող են արվել բանավոր հարցումներ, սակայն դրանք անհապաղ պետք է հաստատվեն գրավոր, այդ թվում՝ տեքստի հաղորդման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Հոդված 7

Հարցման բավարարումը կարող է ամբողջովին կամ մասնակիորեն մերժվել, եթե հարցվող Կողմը գտնի, որ դրա կատարումը կարող է վնաս հասցնել իր պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ հակասում է իր պետությունում գործող օրենսդրության հիմնական սկզբունքներին: Նման որոշում կայացնելու դեպքում հարցում անող Կողմը տեղեկացվում է գրավոր՝ մերժման պատճառների նշումով:

Հոդված 8

Կողմերից յուրաքանչյուրը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները մյուս Կողմին հաղորդվող տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու համար, եթե այդ տեղեկությունները կրում են գաղտնի բնույթ, կամ եթե հաղորդող Կողմը դրանց բովանդակության հրապարակումը համարում է անցանկալի: Տեղեկությունների փակ լինելու աստիճանը որոշում է հաղորդող Կողմը:

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերից որևէ մեկի ստացած տվյալները և տեղեկությունները երրորդ կողմին տալու անհրաժեշտության դեպքում պահանջվում է այդ տվյալները և տեղեկությունները հաղորդող Կողմի գրավոր համաձայնությունը:

Հոդված 9

Կողմերը, փոխադարձ պայմանավորվածությամբ, իրենց աշխատակիցներին կարող են գործուղել Հայաստանի Հանրապետություն և Ռուսաստանի Դաշնություն:

Ընդունող Կողմը ծառայողական գործուղման մեջ գտնվող աշխատակիցներին անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս նրանց վրա դրված առաջադրանքների կատարման գործում, տրամադրվում են անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, ավտոտրանսպորտ և տեղեկության, այդ թվում՝ փակ բնույթի, հաղորդման կապի ուղիներ: Անհրաժեշտության դեպքում նաև աջակցություն է ցույց տրվում գործուղման ընթացքում կացարանի տրամադրման, ուղևորության փաստաթղթեր ձեռք բերելու գործում և գործուղված աշխատակիցների խնդրանքով կարող է ցուցաբերվել նյութական օգնություն՝ հետագայում ծախսերը հատուցելու պայմանով:

Հոդված 10

Կողմերը, մյուս Կողմի նախկին աշխատակիցներին ներքին գործերի մարմիններում ծառայության ընդունելով, այդ մարմիններում ծառայության անցկացման մասին իրենց պետությունների օրենսդրություններին համապատասխան, լուծում են նրանց ծառայողական ստաժի պահպանման հարցերը՝ երկարամյա ծառայության համար տոկոսային հավելավճար տալու, հատուկ կոչում շնորհելու, աշխատանքի վարձատրության, կենսաթոշակի ապահովման, իրավունքներ և արտոնություններ տալու համար:

Հոդված 11

Կողմերը, իրենց կառավարությունների որոշմամբ, փոխադարձ օգնություն են ցույց տալիս տարերային աղետների, խոշոր հրդեհների, վթարների և աղետների, համաճարակների և անասնահամաճարակների հետևանքների վերացման գործում:

Հոդված 12

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի կատարման ընթացքում առաջացող ծախսերը, եթե այլ կարգ չի սահմանվել:

Հոդված 13

Համագործակցություն իրականացնելիս Կողմերն օգտվում են հայերենից և ռուսերենից:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ միջազգային այլ պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:

Հոդված 15

Կողմերը կարող են փոխանակել իրենց ներկայացուցիչներին: Ներկայացուցիչների փոխանակման կարգը և նրանց կարգավիճակը կսահմանվեն առանձին համաձայնագրով՝ հաշվի առնելով երկու պետությունների օրենսդրությունները:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կգործի մինչև դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին Կողմերից մեկի գրավոր ծանուցման՝ մյուս Կողմի ստանալու երեք ամիս լրանալը:

Երկու Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի մայիսի 12-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 12-ից: